



ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

«13» հունվար 2023թ.

Հ Ր Ա Մ Ա Ն N 7-ՉԻ

«ՖԼԱՅՈՒԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏԿՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ
«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 29-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ «2» ԿԵՏՈՎ
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1936-Ն որոշման հավելվածով և հիմք ընդունելով Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի պարտականությունները կատարողի 2021 թվականի դեկտեմբերի 2-ի N 619-Ա հրամանով տրամադրված N 05 հավաստագիրը և N 05 հավաստագրի N 1.3 հավելվածը, ինչպես նաև հաշվի առնելով «Ֆլայուան Արմենիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2023 թվականի հունվարի 10-ին ներկայացված գրությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝


1. Նկատի ունենալով, որ «Ֆլայուան Արմենիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) օդային տրանսպորտի միջազգային ասոցիացիայի (ԻԱՏԱ) ձմեռային ժամանակահատվածից սկսած՝ 2022 թվականի դեկտեմբերի 15-ից՝ շաբաթական 2 (երկու) չվերթ հաճախականությամբ Երևան/UDYZ/-Միլան/LIMC/ երթուղով Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացմամբ Ընկերության կողմից դիմումի ներկայացման օրվա՝ 2023 հունվարի 10-ի դրությամբ

բավարարում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1936-Ն որոշման հավելվածով նախատեսված պայմաններին, չսպասարկված ուղղությունների և չվերթների հաճախականությունների պահանջներին՝ Ընկերության միջոցով Երևան/UDYZ/-Միլան/LIMC/ երթուղով մեկնող ուղևորների վրա տարածվում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի «զ» ենթակետով սահմանված արտոնությունը:

2" Սահմանել, որ սույն հրամանի առաջին կետով նշված արտոնության տրամադրման սկիզբը 2023 թվականի հունվարի 15-ն է՝ 35 ամիս ժամկետով՝ ամիսների նվազման կարգով՝ հաշվի առնելով Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի 2022 թվականի հոկտեմբերի 28-ի N 537-Ա հրամանի 1-ին և 2-րդ կետերը:

3. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի օդային փոխադրումների կարգավորման վարչության պետին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի հանձնումն Ընկերությանը:

4. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի օգնականին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի տեղադրումը Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կայքում:

 Восстановимая подпись

X 

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Подписано: KHACHATRYAN MIHRAN 3308540266 ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ